

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ավագանու 2024
թվականի մայիսի 30-ի N 61-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ (ՏԱՊ)



Կազմվել է՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար
Ա. Սարիբեկյանի կողմից

Հաստատվել է՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու
2024 թվականի մայիսի 30-ի N 61-Ն որոշմամբ

Ք. Մարալիկ – 2024 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... | 3 |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ..... | 4 |
| ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐ..... | 7 |
| ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ..... | 22 |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ..... | 22 |
| ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)..... | 29 |
| ՏԱՊ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ..... | 33 |

Ներածություն

2017 թվականի նոյեմբերին «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորվեց Անի համայնքը՝ իր մեջ ներառելով Անիի տարածքը 19 բնակավայրեր:

Անի համայնքը գտնվում է Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում: Համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով և պատմական մեծ արժեք ներկայացնող բնական քարանձավներով:

Համայնքի բնակչության 48.8%-ը կանայք են, 51.2%-ը՝ տղամարդիկ:

Բնակչության տարիքային կազմը՝

- 0-6 տարեկան՝ 1573, որից 748-ը՝ կանայք:
- 7-18 տարեկան՝ 4140, որից 1883-ը՝ կանայք:
- 18-63 տարեկան՝ 14459, որից՝ 6937-ը կանայք:
- 63-ից բարձր տարեկան՝ 2886, որից՝ 1693-ը կանայք:

Հատուկ կարիքներ ունեցող խմբերը՝

- Հաշմանդամություն ունեցող անձինք 1179, որից 657-ը կին:
- Կենսաթոշակառուներ՝ 2657, որից 1593-ը կանայք:
- Միայնակ կենսաթոշակառուներ՝ 108, որից 85-ը կին:
- Միակողմանի ծնողազուրկ երեխաներ՝ 72, որից 33-ը աղջիկ:
- Նպաստառու ընտանիքներ՝ 863, որից 27-ը՝ կին գլխավորով ընտանիքներ են,
- Ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներ՝ 60:
- Երեք և ավել երեխա ունեցող ընտանիքներ՝ 353:

Տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար տեղաման ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:¹

Համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգելու տեղական ինքնակառավարման մարմինների տվյալ տարվա անելիքները,
- սահմանելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառելու համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկելու համախառն ռեսուրսները և բացահայտելու պակասուրդը (դեֆիցիտը),

¹ «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀՀ, ՀՖՄ, 2017: